ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1824-Ա/2 «14» սեպտեմբերի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ («ԱՆԳԼԵՐԵՆ») ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարանի «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի երրորդ օտար լեզվի առարկայական ծրագիրը («Անգլերեն»)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

9/14/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 14-ի
N 1824-Ա/2 հրամանի

ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՆԳԼԵՐԵՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

(շաբաթական 1,5-2 ժամ)

Նախաբան

Երրորդ օտար լեզվի չափորոշչի և ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Հանրակրթության պետական նոր չափորոշչի (ՀՊՉ) և «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի չափորոշիչն ու ծրագրերը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակներն են՝ Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) A1 և A2 մակադակներին համապատասխան հաղորդակցվելու հմտությունների զարգացումը, այլ մշակույթների ճանաչումը, սովորողների մտահորիզոնի ընդլայնումը, նրանց տրամաբանական, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը:

Ուսուցման և ուսումնառության բովանդակության հիմքում ընկած են մի քանի կարևոր դրույթներ, մասնավորապես՝

1. օտար լեզուն առաջնայնորեն հաղորդակցության միջոց է,
2. օտար լեզուն ուսումնառության և ճանաչողական կարողությունների զարգացման միջոց է,
3. օտար լեզվով հաղորդակցումը աշխարհճանաչման, ինքնաճանաչման և այլ մշակույթների ճանաչման հիմնական միջոցն է:

Երրորդ օտար լեզվի ուսուցումը սկսվում է 5-րդ դասարանից նախաայբբենական շրջանով: Նախաայբբենական շրջանը կառուցվում է բանավոր խոսքի հիման վրա: Բանավոր դասընթացը

կարող է ուղեկցվել այբուբենի տառերի պատկերների ծանոթացմամբ:

Նախաայբբենական շրջանը կարող է ներառել բանավոր խոսքի ձևավորմանը նպաստող կարճ երկխոսություններ, բանաստեղծություններ, երգեր, խաղեր, պաստառներ, համապատասխան տեսալսողական միջոցներ և այլն:

Այս փուլի հիմնական նպատակը հետաքրքրությունների ձևավորելն է երրորդ օտար լեզվի ոսումնառության նկատմամբ: Այդ տարիքի սովորողներն արդեն ունեն որոշակի հաղորդակցական հմտություններ, որոնք թույլ են տալիս շփվել միմյանց հետ նոր օտար լեզվով: Բանավոր դասընթացին հաջորդում է հիմնական մասը: Ելնելով թեմատիկայի և այն ուսումնասիրելու համար անհրաժեշտ լեզվանյութի փոխկապվածությունից և փոխպայմանավորումից՝ թեմատիկ շրջանակն ընտրվել է հաշվի առնելով Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) A1 և A2 մակարդակների համար նախատեսված թեմատիկան և Հանրակրթության պետական նոր չափորոշչով հիմնական դպրոցի կրթական աստիճանի համար սահմանված վերջնարդյունքները:

Սույն ծրագիրը նախատեսված է հանրակրթական դպրոցների կողմից ընտրված երրորդ օտար լեզվի (գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) ուսուցման համար: Այլ լեզու ընտրելու դեպքում հիմք են հանդիսանում ծրագրում նշված թեմատիկան, նպատակներն ու վերջարդյունքները, որոնք կարող են տեղայնացվել՝ կիրառելով համապատասխան քերականություն և բառապաշար:

Վերջանարդյունքներին հասնելու համար ուսումնական նյութերի ընտրությունը թողնվում է ուսուցչին. դրանք կարող են լինել ինչպես գործող դասագրքերը, այնպես էլ A1 և A2 մակարդակներին համապատասխան այլ ձեռնարկները և առցանց տարբեր նյութեր:

Ծրագրում ներկայացված միջառարկայական կապեր բաժնում նշված տարբեր առարկաներից ուսուցիչը ընտրում է այն առարկան, որն առավելագույնս խաչվում է օրվա դասի թեմայի հետ:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակները

Հիմնական դպրոցում երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակն է՝

1. ԼԻԵՇ-ի **A1, A2** մակարդակներին համապատասխան հաղորդակցական կարողությունների զարգացումը,

2. կրթական տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիքի (բառապաշար, քերականություն, ուղղագրություն, արտասանություն) զարգացումը,
3. սովորողների մոտ այլ լեզուների և մշակույթների հանդեպ հետաքրքրության սերմանումը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման վերջնարդյունքները.

Հաղորդակցություն

1. Լսել և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով հնչող պարզ, հստակ և դանդաղ խոսքը:
2. Կարդալ և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով պարզ տեքստի հաղորդած տեղեկությունները և հիմնական բովանդակությունը:
3. Համառոտ նկարագրել իրեն, իր շրջապատը, իր առօրյան:
4. Շարադրել պարզ համառոտ տեքստ իր, իր շրջապատի, առօրյայի մասին:
5. Սկսել երկխոսություն իրեն ծանոթ թեմայով՝ արձագանքելով իրեն ուղղված հարցերին: Արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն՝ տալով պարզ պատասխաններ կամ խնդրելով հստակեցումներ:
6. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (քերականություն, բառապաշար):

1. Մշակութային վերջնարդյունքներ

Արժեքներ

1. Ճանաչել համաշխարհային մշակութային բազմազանությունը, ժառանգությունը և արժեքները:
2. Գիտակցել բազմալեզու կրթության դերը՝ որպես գլոբալ աշխատաշուկայում հաջողության գրավական:
3. Կարևորել համակեցության նախապայման հանդիսացող արժեքները (ընկերասիրություն, հարգանք, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և այլն):

Վերաբերմունք

1. Ցուցաբերել հարգալից, հոգատար և պատասխանատու վերաբերմունք այլ ազգությունների, նրանց մշակույթների նկատմամբ:
2. Ցուցաբերել հետաքրքրություն այլ երկրների և մշակույթների ճանաչման նկատմամբ:

Նորմեր, կանոններ

1. Իմանալ լեզվակիր երկրի մշակութային առանձնահատկությունները:
2. Ճանաչել մշակույթով/ժամանակով պայմանավորված կենցաղի մի շարք նորմեր (հագուստ, սնունդ և այլն):
3. Ճանաչել ուսումնասիրվող լեզվով հաղորդակցության նորմերը և պահպանել դրանք այդ լեզվով հաղորդակցվելիս:

Հետաքրքրություններ/Նախասիրություններ

1. Դրսևորել հետաքրքրություն ուսումասիրվող լեզվի երկրների մշակութային արժեքների հանդեպ:
2. Ճանաչել ուսումնասիրվող լեզվի երկրի հասակակցի հետաքրքրություններն ու նախասիրությունները:

2. Քննական և ստեղծարար միտք

Միտք

1. Ձևակերպել կապակցված միտք արտահայտող պարզ խոսք:
2. Բերել պարզ հիմնավորումներ:
3. Ընտրել, ստեղծել և կիրառել մտքերն արդյունավետ կերպով ներկայացնող տեսողական միջոցներ:

Տրամաբանական կապեր

1. Դասավորել մտքերը միմյանց հետ փոխկապակցվածությամբ (ընդհանուր/մասնավոր, պատճառ/հետևանք)՝ ճիշտ լեզվական միջոցների կիրառմամբ:

Վերլուծություն

1. Դասակարգել թեմայի շուրջ ստացված տեղեկությունները:

2. Նշել ազգային և համաշխարհային մշակույթների նմանություններն ու տարբերությունները:

Առաջընթաց

1. Արձագանքել ուսուցչի պարզ հրահանգներին:
2. Բերել պարզ հիմնավորումներ, մտքեր և մեկնաբանել դրանք:

1. Կրթություն
2. Մշակույթ
3. Աղետներ
4. Գրքեր և ֆիլմեր

Թեմա 1	
Կրթություն	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել և ամրապնդել** կրթության կարևորության գաղափարը, 2. **Ընդլայնել և ամրապնդել** կրթությանը վերաբերող բառապաշարը, 3. **Ներմուծել** թեմային համապատասխան քերականական նյութը, **4. Ձևավորել ինքնուրույն սովորելը և կրթության շարունակականությունը արժևորող վերաբերմունք:**	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան	***Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ կրթություն թեմայով տեսաձայնագրությունների բովանդակության ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ, 2. կարդալ և հասկանալ կրթություն և կրթական

քերականական նյութը, 3. կրթական տարբեր համակարգերը, 4. տարբեր մասնագիտությունների բնորոշումները, դերը: ժամանակակից հասարակությունում, 5. Կրթության շարունակականության ապահովման հնարավորությունները:	համակարգեր թեմայով տեղեկատվական տեքստերի ընդհանուր բովանդակությունը՝ գտնելով իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, 3. ներկայացնել տարբեր (ՀՀ և ուսումնասիրվող լեզվի երկրի/երկրների) կրթական համակարգեր թեմայով ելույթ՝ համեմատելով դրանք, արտահայտելով իր կարծիքը, 4. գրել կարճ շարադրություն՝ նկարագրելով որևէ կրթական համակարգ (ՀՀ և ուսումնասիրվող լեզվի երկրի/երկրների), 5. ներկայացնել մասնագիտություն թեմայով պատրաստված ելույթ՝ պատասխանելով դրան հաջորդող հարցերին, **6. արժևորել ինքնուրույն սովորելու կարևորությունը:**
Բովանդակություն	
1. Ինչու՞ եմ սովորում 2. Կրթական համակարգեր 3. Իմ ապագա մասնագիտությունը	
Առաջարկվող գործունեության ձևեր	
1. Դերախաղ (հարցազրույց, տեղեկատվության հարցում) 2. Բանավեճ՝ «Կրթության դերը. սովորե՞լ, թե՞ չսովորել» 3. Պաստառ՝ «Կրթական համակարգեր» 4. Սահիկաշար՝ «Իմ ապագա մասնագիտությունը»	
Միջառարկայական կապերին	
Թվային գրագիտություն և Համակարգչային գիտություն- Օգտվել տեղեկատվություն ստանալու նպատակով տարբեր աղբյուրներից, կիրառել թվային կերպով ցիտելու գործիքները: **Հասարակագիտություն -** Ներկայացնել և հիմնավորել կրթության իրավունքի անհրաժեշտությունը: **Գրականություն** – Վերլուծել գրական ստեղծագործություն, որտեղ ընդգծվում է կրթության լուսավորչական ազդեցությունը:	

<table>
<tr><td colspan="2">Թեմա 2</td></tr>
<tr><td colspan="2">Մշակույթ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ընդլայնել և ամրապնդել մշակույթին վերաբերող բառապաշարը:
2. Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը:
3. Ձևավորել պատասխանատու վերաբերմունք՝ ազգային և համաշխարհային մշակույթի, մշակութային ժառանգությունների հանդեպ:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td>Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

1. թեմային առնչվող բառապաշարը,
2. համապատասխան քերականական նյութը,
3. ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության օրինակներ (տարբեր ճյուղերից՝ կինո, թատրոն, օպերա, երաժշտություն, գեղարվեստ, ճարտարապետություն և այլն):</td><td>Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

1. լսել և հասկանալ ազգային և համաշխարհային մշակութային վայրերի վերաբերյալ տեսանյութերի/ձայնագրությունների ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ,
2. կարդալ և հասկանալ մշակույթ թեմայով նկարագրական և տեղեկատվական տեքստերի բովանդակությունը,
3. ներկայացնել տարբեր երկրների (Հայաստանի և ուսումնասիրվող երկրի/երկրների լեզվի) մշակութային ժառանգությունները՝ գտնելով նմանությունները և տարբերությունները,
4. գրել մշակույթի/մշակութային ժառանգության ընտրված օբյեկտի մասին կարճ նկարագրական էսսե՝ ներկայացնելով սեփական տպավորությունները և զգացմունքները,
5. քննարկել մշակույթի ոլորտի արդի խնդիրները (պահպանություն, ճանաչում, հարգանք, արժևորում)՝ արտահայտելով իր կարծիքը, հիմնավորելով և բացատրելով իր մոտեցումները,
6. դրսևորել պատասխանատու վերաբերմունք ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության նկատմամբ:</td></tr>
</table>

Բովանդակություն
1. Ժամանակակից մշակույթ (կինո, երաժշտություն, գեղարվեստ) 2. Մշակութային իրադարձություններ
Առաջարկվող գործունեության ձևեր
1. Դերախաղ 2. Բանավեճ՝ «Պահպանե՞լ, թե՞ ստեղծել նորը» 3. Պաստառ՝ «Հայկական ժառանգությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում» 4. Այցելություն պատմամշակութային վայր/թանգարան
Միջառարկայական կապերին
Արվեստ - ներկայացնել համաշխարհային արվեստի բացառիկ նմուշներ նորարարական մատուցմամբ /2D, 3D, 4D,/,կատարել վերլուծություններ եւ հետազոտություններ, մշակութային իրադարձության նշանակալիության, կարեւորության վերաբերյալ: **Համաշխարհային պատմություն** -Ներկայացնել մշակութային կարևոր: դերակատարում ունեցող անհատներին, գնահատել նրանց գործունեությունը եւ դերակատարումը:

Թեմա 3
Աղետներ
Հիմնական նպատակը
1. **Ներմուծել** աղետների տեսակները, դրանց առաջացման պատճառները և կանխարգելման հնարավորությունները: **2. Ընդլայնել և ամրապնդել** աղետներին վերաբերող բառապաշարը: **3. Ձևավորել բնական աղետների ռիսկերի նվազեցման և դիմակայման, ինչպես նաև երկիր մոլորակը տեխնածին/արհեստածին աղետներից զերծ պահելու գիտակցություն:**

<table>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

1. թեմային առնչվող բառապաշարը,
2. համապատասխան քերականական նյութը,
3. բնական և տեխնածին աղետների տեսակները,
4. աղետների ժամանակ ճիշտ կողմնորոշվելու կանոնները:</td><td>Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

1. լսել և հասկանալ աղետներ թեմայով հնչող տեքստերի կամ հեռուստամեդիայի հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ,
2. կարդալ և հասկանալ աղետներ թեմայով (բնական և տեխնածին աղետներ, աղետների տեսակներ) տեքստերի հիմնական բովանդակությունը,
3. նկարագրել աղետների հիմնական պատճառները, մարդկային գործոնը աղետի կանխման/մեղմման գործում՝ կանխատեսելով հնարավոր զարգացումները,
4. գրել որևէ աղետի վերաբերյալ կարճ տեղեկատվական հոդված,
5. քննարկել բնական և տեխնածին աղետների պատճառները՝ ներկայացնելով փաստեր, կատարելով դատողություններ և եզրահանգումներ,
6. դրսևորել բնական աղետների ռիսկերի նվազեցման և դիմակայման, ինչպես նաև Երկիր մոլորակը տեխնածին/արհեստածին աղետներից զերծ պահելու գիտակցություն:</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">1. Աղետների հիմնական տեսակները (բնական, տեխնածին, էկոլոգիական աղետներ)
2. Մարդկային գործոնը աղետի կանխման/մեղմման և նրա հետևանքների վերացման գործում</td></tr>
<tr><th colspan="2">Առաջարկվող գործունեության ձևեր</th></tr>
<tr><td colspan="2">1. Դերախաղ
2. Պաստառ՝ «Բնական աղետներ»
3. Սահիկաշար՝ «Տեխնածին աղետներ»
4. Նախագիծ՝ տեղեկատվական թերթիկի ստեղծում՝ աղետների ժամանակ վարքի և առաջին օգնության կանոններ,
5. Բանավեճ՝ «Գիտատեխնիկական առաջընթացը՝ տեխնածին աղետի պատճա՞ռ»</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապերին</th></tr>
</table>

ՆԶՊ -Բացատրել քաղաքացիական պաշտպանության անհրաժեշտությունը ժամանակակից աշխարհում: **Կենսաբանություն**-Ներկայացնել մարդու վնասակար ազդեցության նվազեցմանը եւ բնության պահպանությանն ուղղված լուծումներ: **Աշխարհագրություն** -Ներկայացնել ՀՀ-ին առավել բնորոշ բնական և արհեստական աղետներն ու պաշտպանության միջոցառումները:

Թեմա 4	
Գրքեր և ֆիլմեր	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել և ամրապնդել** մարդու կյանքում գրքերի և ֆիլմերի կարևորության գաղափարը: 2. **Ներմուծել և ամրապնդել** գրքեր և ֆիլմեր թեմային վերաբերող բառապաշարը: 3. **Ներմուծել** թեմային համապատասխան քերականական նյութը: **4. Ձևավորել հետաքրքություն գրքերի և ֆիլմերի նկատմամբ՝ որպես ինքնակրթման և ինքնազարգացման աղբյուր:**	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 6. թեմային առնչվող բառապաշարը 7. համապատասխան քերականական նյութը 8. գրքերի և ֆիլմերի ժանրերը, դրանց առանձնահատկությունները:	***Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ գրական ստեղծագործության էկրանավորված տարբերակից որևէ դրվագի ընդհանուր բովանդակությունը և որոշ մանրամասներ, 2. կարդալ և հասկանալ գեղարվեստական կարճ ստեղծագործության/հատվածի բովանդակությունը, դրանում ներկայացված նկարագրությունները, 3. ներկայացնել գրական ստեղծագործությունը և դրա էկրանավորված տարբերակը՝ համեմատելով դրանք, հիմնավորելով իրենց նախընտրությունը, 4. գրել գրքի կամ ֆիլմի վերաբերյալ իր կարծիքը՝ հիմնավորելով իր մոտեցումները,

	5. քննարկել գրական ստեղծագործությունից կամ ֆիլմից մի դրվագ՝ արտահայտելով իր տպավորությունները, արձագանքելով խոսակցի կարծիքին և տպավորություններին, 6. **գիտակցել գրքերի և ֆիլմերի դերը որպես ինքնակրթման և ինքնազարգացման միջոց:**

Բովանդակություն

1. Ինչ եմ սիրում կարդալ/դիտել (ժանրեր)
2. Իմ նախընտրած գիրքը/ֆիլմը
3. Գրքե՞ր, թե՞ ֆիլմեր

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Դերախաղ
2. Ֆիլմի դրվագի դիտում և քննարկում
3. Գրական ստեղծագործության հատվածի ընթերցում և քննարկում
4. Պաստառ/սահիկաշար՝ «Գրական ժանրեր», «Ֆիլմի ժանրեր»
5. Բանավեճ՝ «Գրքեր թե՞ Ֆիլմեր»

Միջառարկայական կապեր

Գրականություն- Տարբերել ստեղծագործության ժանրը՝ ելնելով գրական առանցքային առանձնահատկություններից:
Արվեստ-Ներկայացնել որևէ գրքի կամ ֆիլմի թողած ազդեցությունը՝ մեկնաբանելով և հիմնավորելով կարծիքը:

Դասարան	Թեմաներ	Քերականություն
9-րդ դասարան	1. Կրթություն 2. Մշակույթ 3. Աղետներ 4. Գրքեր և ֆիլմեր	Connecting words:(though, in spite of, however, etc.) Modals of deduction- must/can't Be used to and get used to Phrasal verbs: Extended Reported speech: Orders and requests, statements questions and reporting verbs Passive voice: present/ past simple Forming verbs: suffixes -ise,-en, -ate, -fy prefixes re-, un-, dis-, over-, mis-, sub- Compound nouns and adjectives

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2021թ.
2. Հանրակրթական ընդհանուր ծրագրի «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» բնագավառի 2-12-րդ դասարանների չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2021թ.
3. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Cambridge University Press, Modern Languages Division, Council of Europe, Strasbourg, 2001. Available at https://rm.coe.int/1680459f97